Մ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՎԻՐԸ ԸՍՏ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

11029

Ինքնառեֆերատ դիսերտացիոն աշխատանքի՝ ներկայացված փիլոսոֆիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար

ԵՐԵՎԱՆ 1949

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՎԻՐԸ ԸՍՏ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

9(47.925)
Ի-

ԻՆՖՈՒՆԱՐԵՖԵՐԱՏ

Սկսած 1830-ական թվականներից Արմավիրը հետաքրքրել է հնագետներին, բայց առաջին հերթին հայագետներին: Ժամանակ առ ժամանակ Արմավիր են այցելել մի շարք դիտաններ, երբեմն և դիտական էքսպեդիցիաներ, նաև ոչ մասնագետ մարդիկ, սակայն բոլորն էլ նշել են միայն Արմավիրի պեղման անհրաժեշտությունը, իսկ լավագույն դեպքում բավարարվել են առերես եղած հուշարձանների նկարագրությամբ:

Հատկապես կարևոր նշանակություն է ունենում ռուս խոշոր գիտնականներ Մ. Նիկոլսկու և Ա. Իվանովսկու 1893—1896 թ. թ. էքսպեդիցիան դեպի Անդրկովկաս: Մ. Նիկոլսկին վերջնականապես պարզում է, որ ուրարտական արձանագրություններում հիշատակվող Արգիշտիխինիլին (Argištihinili) նույն պատմական Արմավիրն է, որը գտնվել է Արաքսի ձախ ափին՝ Դաւրդաւղալի, Թափա-գիրի գյուղերի մոտ:

Արմավիրի պատահական բնույթ կրող այդ պեղումները, այնուամենայնիվ, հայտնաբերել են մեծ թվով հնագիտական, պատմական խոշոր արժեք ունեցող նյութեր, որոնց թվում նաև ուրարտական սեպագիր արձանագրություններ:

Մեր նպատակից դուրս համարելով Արմավիրից գտնված նյութական կուլտուրայի բազմաբովանդակ նյութերի քննարկումը, մենք այստեղ տալիս ենք միայն ուրարտական արձանագրությունների նկարագիրն ու ուսումնասիրությունը:

1869 թվից մինչև մեր օրերը հայտնաբերված է՝ արմավիրյան բազմաթիվ այլ քարերի հետ, մոտավորապես 20 արձանագրեր, որից 17-ը եղել են մեր տրամադրության տակ՝ Հայաստանի Պետական Պատմական թանգարանում: Այդ 17 քարերից 3-ը փոքր բեկորներ են, որոնցից 2-ը (Բ. և Գ. բեկորներ)

մեր կողմից են ուսումնասիրվում առաջին անգամ. մնացյա
14 քարը կազմում են 12 արձանագրություն. բացի սրանից
վերլուծում ենք նաև Կարակալայի արձանագրությունը՝ օգտվ
լով Մ. Նիկոլսկու հրատարակությունից[1]։

Վերոհիշյալ քարերը գտնվել են մասամբ Արմավիրում
մասամբ էլ՝ շրջակա գյուղերում. սրանք բոլորն էլ իրավ
ճանաչված են որպես արմավիրյան արձանագրեր, ինչպես ս
տաքին նման տեսքով, այնպես էլ ներքին բովանդակությա
Այս քարերը, համարյա առանց բացառության, շինարարակա
ճարտարապետական մասեր են՝ սյունահիմքեր (№ 3 և
սանդղաձև քարեր (№ 8), սրմնաքարեր, որոնք համարյա մ
միևնույն մեծությունն ունեն, հղկված են միևնույն ձևով. ս
է պատճառը, որ հմուտ աչքը իսկույն կարողանում է ճանա
արմավիրյան՝ ուրարտական շրջանի քարը, ուր էլ որ գտն
վերջինը։

Նոր կառույցների համար օգտագործվելու տեսակետից
բացառություն չեն կազմել և արձանագրված քարերը, մանա-
վանդ որ նրանք ճանաչվել են որպես սրբություն, որպես հրա-
շագործ գիր և, հավանաբար, նորակառույց շինքում շարվել են
և՝ որպես թալիսման[2]։

Մեզ հասած արմավիրյան այդ ուրարտական տեքստերը
ինչպես գիտել են և ուրիշները, հիշատակում են ուրարտական
տիրողների միայն երեք անուն՝ Արգիշտի Մենուայան (790—
760), Սարդուր Արգիշտյան (760—730) և Ռուսա Էրիմենայան
(605—585)։

Արգիշտի I մեծ նվաճողը Արմավիրում ևս թողել է իր ս-

---

[1] MAK, V, 1896, տախտակ 11։ Ինչ վերաբերում է Կար
մեր-բլուրից պեղած վահանի ու սաղավարտի վրա փորագրված
տեքստերին, մենք, հակառակ պրոֆ. Բ. Պիոտրովսկու կարծիքին
չենք համարում այն արմավիրյան և այդ պատճառով էլ ավե
լորդ ենք համարում հիշյալ տեքստերը մանրամասն վերլու-
ման ենթարկել (այդ առթիվ տես՝ էջ 127—130)։

[2] Ի դեպ՝ հետաքրքիր լեգենդներ են պատմում այդ սեպագրե
րի շուրջը. բերենք մի օրինակ՝ «Գյուղի ծերունիների ասելով
արձանագրությունը Դալի-Բաբայի մոտիկ Բաղաղ կոչված տեղի հին
ավերակ եկեղեցու քարերից է, և իբրև սրբություն բերվել, դրվ
է Դալի Բաբայի եկեղեցու մոտ, որմի մեջ (Արարատ, 1910 թ.,
189—192)։

նունով հուշարձաններ՝ թվով վեց սեպագիր արձանագրություն (մեզ մոտ № 1—6 ներառյալ)[1]։ Տեքստերի մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արգիշտին տեղի նվաճման մասին ոչ մի հիշատակում չունի[2]։ Անշուշտ այն պատկանել է Մանա երկրին, ինչպես կարելի է ենթադրել խորխորյան տարեգրության 4-րդ սյունակի 71—73-րդ տողերից, որը նվաճելուց հետո, Զամավիրը՝ Ազայան այդ երկիրը, ինքնին անցնում է Արգիշտու տիրը։ Արմավիրի դիրքը չէր կարող չդրավել Արգիշտիի ուշադրությունը։ Եվ ահա նա անմիջապես ձեռնարկում է վարչատնտեսական խոշոր շինարարության։ Կառուցում է բերդ (Ê.GAL)։ Բերդի կառուցման միակ հիշատակությունը տալիս է մեզ մոտ № 1 արձանագրությունը. մնացած տեքստերում այդ մասին ոչ մի ակնարկ չկա, և մեր կարծիքով, Սարդուրի արմավիրյան տեքստերում, նախորդ ուսումնասիրողների կողմից վերականգնված Ê.GAL-ը բոլոր դեպքերում սխալ է. № 8 արձանագրության 4-րդ տողում չի կարող Ê.GAL լինել, որովհետև վերջին GAL (𒃲) նշանի համար քարի վրա տեղ չկա, իսկ դաղափարագրի բաղկացուցիչ այդ մասը դժվար թե երկրորդ քարին տեղափոխված լինի. հօդուտ այս ենթադրության է խոսում նաև ամբողջ տեքստը իր կրոնական բնույթով։ № 10 արձանագրության 2-րդ տողի շարունակության մեջ, մեր համոզմամբ, նույնպես ճիշտ չէ Ê.GAL-ի վերականգնումը. առաջին տողի [ᵈSar-du-ri-še] ընթերցումը ցույց է տալիս, որ 2-րդ տողը համապատասխան տեղում պարունակելու է 4—7 սեպախումբ և ուրեմն Ê.GAL-ը (𒄀𒄀𒄀𒄀 𒃲) չի կարող ծածկել պակասող ողջ տողը. կարծում ենք այդտեղ եղել է, հավանաբար, ᵈḪal-di-na-ni KÁ (դամ նման մի բան)։

[1] Մ. Նիկոլսկու մոտ՝ 7 արձանագրություն, ուր նկատի է առնված 5 տողանի բեկորը (մեզ մոտ՝ էջ 122)։ Այդ թվի մեջ է մտել Շահրիարի արձանագրությունը, իսկ մեզ մոտ № 5 արձանագրության 1-ին և 2-րդ քարերը Նիկոլսկին դրել է առանձին համարների տակ՝ № 10 և № 11։

[2] Ուրարտական արձանագրություններում չի հիշատակված նաև Արմավիր տեղանունը. պարզ չէ բառի ստուգաբանությունը. թերևս բառը կազմված է խեթական auri (awari)=բերդ, զորանոց բառով և նշանակում է Ար(ա)մարերդ, երիմենա աստվի կամ Ծագավորի անունով, եթե միայն խեթական այդ բառը կիրառվել է ուրարտերենում. հետագա պեղումները դուցե թե պարզեն այդ հարցը։

Սարգուր II-ի միակ տեքստը, ուր հանդիպում ենք É.GAL դաղափարագրին, հաղորդում է անկասկած նույն՝ Արգիշտու կառուցած բերդի, նաև պարսպի վերանորոգման, կարգի բերման մասին (šaue manulie—№ 7 արձանագրություն)։ Այս տեքստից կարելի է ենթադրել, որ Արգիշտին բերդը հանձնում է (kuulie, որի հետ, մեր կարծիքով, նույնն է նույն տեքստի 4-րդ տողում հանդիպող kuuldiani բառիմաստը)[1] Սարգուրին դեռևս իր կենդանության ժամանակ, քանի որ արձանագրության մեջ Սարգուրը խոսում է իր և իր հոր անունից, ըստ որում առաջնությունը միշտ տալիս է հորը։

Արգիշտին անց է կացնում ջրանցք (pi-li) քաջ դիտակցելով, որ Արմավիրի հողը, ինչպես նշում են հետագա ուսումնասիրողները՝ «...տեղ-տեղ ճահճային է, տեղ-տեղ առատար, բայց ուր ջուր է հասնում, բարերար է և արդավանդ»[2]։ Բերում է նաև առուներ (ša-nu-e) դեռ Muna-ից (Արաքսից), որ, հավանաբար, ուրարտական զեռ || ջուր հատարակ գոյականն է։ Ոռոգման այս աղբյուրը տևել է դարեր շարունակ[3] և մեզ բնավ անհավանական չի թվում, որ Արմավիրը իր նշանակությունը կորցրած լինի հենց այդ գետի մեծավորությունից զրկվելու հետևանքով։

Սխալվում են նախորդ հետազոտողները, որոնք Սարգուր II-ին վերագրում են Արմավիրում բերդ կամ ջրանցք կառուցելու պատիվը. Սարգուրի արմավիրյան 6 արձանագրություններից և ոչ մեկը որևէ հիշատակում այդ մասին չի տալիս։

Արգիշտին պարսպապատում է իր բերդը և տգա՝ ծառազարդում այն. անկում է ուրարտացոց սիրած ծառատեսակները՝ խաղողի որթատունկ (GIŠ uldi) և ինչ-որ ծառ (GIŠ zari)։ Այս բոլորը, հավանաբար, ատամածնների հավանավորությանը հանձնելու համար՝ կառուցում է տաճար (É)։

---

[1] Kuulie, ինչպես հայտնի է Զմարթենցի արձանագրության տեքստից, նշանակում է հաճենել || մատնել (հողին). kuuldiani բառաձևում -di- մասնիկը, հավանաբար, փոքրաստիճան գոյականակերտ di/ti սուffիքսն է, որ առկա է նաև ar-uni=տալ→ar-di=ցվեր բառում։ Այսպիսով՝ mei ini É.GAL kuuldiani կապակցությունը մենք թարգմանում ենք՝ «...թե այս բերդը հանձնված» (Սարգուրին, ըստ երևույթին Արգիշտու կողմից)։

[2] Արարատ, 1910 թ., էջ 1196։

[3] Արարատ, 1910 թ., 1201 էջում հոդվածագիրը վկայում է, որ «...դավառակը ջրվում է մեծ մասամբ Երասխից հանած առուներով»։

Այսպիսով՝ Արգիշտի I ուրարտական թագավորն է, որ Արմավիրը դարձնում է կարևոր ռազմական, վարչա-տնտեսական մի կենտրոն և կոչում է այն իր անունով՝ [1]Argištiḫinili:

Վարչա-տնտեսական հետևյալ օրենքը Արմավիրում կառուցել է Ռուսա Երիմենյանը։ Այս օրենքը՝ [E]'ari-ն (աշտարակը?) որոշ դիտականներ (Մ. Նիկոլսկի, Բ. Պիոտրովսկի և ուրիշներ) թարգմանում են քերդ իմաստով։

Մեզ թվում է, թե այն հանգամանքը, որ E. GAL-քերդի հետ միշտ կիրառվում է šidiištu-ni (=կառուցեց) բայը, իսկ [E.]'ari-ի հետ, առանց բացառության, šuu-ni (=բարձրացրեց?) բայը, և այն, որ 'ari-ն կառուցվում է առանց խալդ աստծու օժանդակության, մեզ իրավունք է տալիս մտածելու, որ [E.] 'ari-ն խոշոր ձեռնարկություն չէ, այլ ըստ երևույթին, բերդին կից մի օժանդակ շինք, թերևս աշտարակ, ինչպես թարգմանում է ակադ. Դր. Ղափանցյանը։ Այդ տեսակետից բնորոշ է, որ Արգիշտին Արմավիրում իր բոլոր գործերը, առանց բացառության, կատարում է «Խալդյան մեծության շնորհիվ» — [d]Ḫaldinini alsuišini, իսկ Սարդուր II-ը նույնպես համարյա առանց բացառության, իր կրոնա-շինարարական ձեռնարկությունները նվիրաբերում, ձոնում է «Խալդուն՝ յուր տիրոջը» — [d]Ḫaldie EN. ŠU կամ՝ [d]Ḫaldie eurie:

Արգիշտու վարչա-տնտեսական, ռազմա-քաղաքական գործունեությամբ ոչ միայն չի նսեմանում Արմավիրը որպես կրոնական վայր, այլ, ընդհակառակն, ավելի հզոր վայր է առանում ուրարտական արդեն կազմակերպված ու շեշտված կրոնի ազդեցությամբ։

Արմավիրում հատկապես շեշտվել է Խալդու պաշտամունքը՝ թվով 9-ը արձանագրության մեջ Խալդը հիշատակվում է ավելի քան 18 անգամ, իսկ Թեյշեբա և Արգինի (Արևի) աստվածները հանդիպում են միայն № 7 արձանագրության տեքստի անհայտ սովորական փոխարկությամբ։ Արևի աստվածը արդարադատության իմաստով հանդիպում է նաև № 11 արձանագրության տեքստում։ Արմավիրյան տեքստերը Թեյշեբայի և Արգինիի այլ հիշատակում չեն տալիս. այս իսկ պատճառով դժվարանում ենք ընդունել Մ. Նիկոլսկու այն ենթադրությունը թե Արմավիրում եղել է նաև Արև աստծու կուլտ[1]։ Ընդհակառակն,

[1] MAK, V, 1896, էջ՝ 41, 63։

մենք կարծում ենք, որ կարելի է մի հեռավոր ենթադրություն անել այն մասին, թե ուրարտական եռահանգույց շղթան կազմող ամրություններից յուրաքանչյուրը նվիրված է եղել թերևս եռաստվածության առանձին անդամի. Արմավիրում ուժեղ է Խալդու կուլտը, Կարմիր-բլուրը կոչվել է Թեյշեբայի անվամբ (dTeišebaini URU)[1], արդյոք Դանալի-Թափան (Արինբերդը) նվիրված չի՞ եղել Արև աստծուն[2]:

Կրոնական բնույթի տեքստերի մեր համեմատությունը շինարարական արձանագրությունների հետ (№№ 1, 2, 3, 4 և 13) պարզում է հետևյալ հետաքրքիր երևույթը. Արգիշտի I շինարարը ավելի պերճախոս է դառնում կրոնական տեքստերում (№ 5 և 6). այս մոմենտը ակնհայտ է և Սարդուր II-ի արձանագրություններում (№ 7—12). Այդ տեքստերը շինարարականի համեմատությամբ ավելի երկարաշունչ են, ծավալուն և հեռուկրկնություն լինելուց:

Բայի № 9 տեքստից, Ճնցածները փոքրագրված են իրար շարունակություն կազմող մի քանի քարի վրա. այս բնորոշ հանգամանքը մենք չենք կարող պատահականության վերագրել: Անշուշտ սա բխում է ժամանակի կրոնական մտածելակերպից, որը և մշակել է իրեն համապատասխան՝ արտահայտման ուրույն ոճ:

Բայի ճարտարապետական մատեղացումից, արդյոք շինարարական մաս կազմող արմավիրյան քարերի տեքստերը նպատակով չեն մատնատված, որպեսզի շենքը կազմող այդ առանձին բեկորները տեքստի՝ այսինքն գրի աստվածային ուժով իրար ավելի ամուր կապվեն իրար, ավելի հաստատուն պահեն զեռ այսօր էլ զիտողին զարմանք ու հիացմունք պատճառող կառույցումները:

Կրոնական ուժեղ մատյանությունն է պատճառը, որ արմավիրյան տեքստերի լեզուն ու ոճը հեռանում են սովորական

---

[1] Ն. Մառի անվան Կարինեսի Աշխատություններ, № 2, 1947, Պետհամալսարանի հրատարակություն, էջ 222:

[2] Եթե հետագա պեղումները արդարացնեն մեր այս ենթադրությունը, ապա կարելի կլինի ասել, որ ուրարտական եռաստվածության պաշտամունքի կենտրոնները միա՛յն Արգինի, Կումենու և Տուշպա քաղաքները չեն եղել (այս կենտրոնների առթիվ տես՝ ვ. მელიქიშვილი.— ურარტუს უზენაეს ღვთაებათა კულტის ცენტრები.—საქ. სსრ. მეცნ. აკად. „მოამბე“, ტომი VII, № 6, 1946 წ., էջ 385 և շրկ.):

տրաֆարետից և իրենց համեմատական օրիգինալությամբ ու-սճի բարձրանդությամբ անկասկած հարստացնում են ուրարտական ընդհանուր գանձարանը։ Անգամ անեծքի շարքն տեքստը մեզ մատ հանդես է գալիս առանձին ինքնատիպությամբ (№ 7 արձանագրություն, տող 14—28)։

Ուրարտական մեկ հատած բառապաշարից արմավիրյան տեքստերում կիրառված են 150—160 բառ, որից 23-ը արտահայտված են գաղափարագրերեն։ Ամբողջ այս բառարանի հարյուր ½-ը կազմում են այն բառերը, որոնք կիրառված են միայն արմավիրյան տեքստերում. եթե որոշ ավելացնենք այն բառերը, որոնք վերոհիշյալ արձանագրություններում տալիս են կիրառման 2-րդ, 3-րդ դեպքերը, և կամ հաճախ հավատում են արդեն 4—5 անգամ, կիրառված բառերը, ապա այդ թիվը ½-ից կանցնի։ Թվենք նախ նոր բառերը. amani, ardiani, ameli, alae, anuni, (որ մեր համոզմամբ առաջին անգամ հանդիպում է Ջանֆիլդայի արձանագրության 9-րդ տողում. այդ բառի գոյությունը ուրարտական տեքստերում մինչ այդ եղել է թյուրիմացության արդյունք. Մեհրյան դռան արձանագրության 31/94-րդ տողում ilmuuše և maanuni բառերը կարդացել են ilmutu anuni, այսինքն՝ առաջին բառի վերջին še(𒄭)-ն և երկրորդ բառի սկզբի ma(𒈠)-ն ընդունել են որպես մեկ՝ tu(𒌋𒁹𒁹) նշանը), ašta(??), gubuštali, eu, iptuuni, iradinini, iḫaiduše (№ 5 արձանագրության 1-ին քարի 13-րդ տողում, հիմք ունենալով նախորդ և հաջորդ բառերի թվականները հաստատորեն վերականգնում ենք 1 iḫaiduše, նախորդ՝ meiḫaiduše կամ ¹Iḫaiduše ընթերցումների փոխարեն), ilmuuše, KU-ni, KURUN^pl, kušuuni, kuuldiani (տես այստեղ, էջ 6, ծանոթություն 1), KI-ni (կամ ki-ni։ Մենք № 5 արձանագրության առաջին քարի 2-րդ տողում 𒆠𒁹𒄿𒁹 𒄿𒁹𒄿𒁹 նշանները ըմբռնում ենք KI-ni=հող, սահման, գաղափարագիրը. ըստ Meisner-ի № 194 սեպագրությունը, և ուրեմն՝ ...[¹Ar]gištiḫina ¹'Azani KUR-ni KI-ni KUR lulue manu... թարգմանում ենք՝ «...Արգիշտիխինայում, (որ) Ազայի երկիրն (էր)՝ հողը բարբարոս || թշնամի երկրին սահմանած...»։ Այս արձանագրության մեջ ենթական, մեր կարծիքով, ոչ թե Ազան է, այլ Արգիշտին, որ նվիրաբերումներ է կատարում, ըստ երևույթին, Ազայի երկրին պատկանող Արգիշտիխինայում), luerašini(??), LU abi կամ luabi, liuani, lakuiani, mašani,

meriib...(?) *(տես* tiišni *բառը տառին)*, nunulie, ḫupadu, ^{LU}purunuurdadi, Ê. siriḫani, siiprugini, ^{LU}šeluini, šepuia, šepuialie, šugabari šanue^{pl}, tiišni *(միանգամայն սխալ է* tišni/tišnu *բառի իբր աջակողմյան մեկնությունը, որ հիմնված է Սեյսի ակնհայտ սխալ ընթերցման վրա. Սեյսը մեզ մոտ № 6 արձանագրության 11-րդ տողի* UZU(𒁹𒁹𒁹 𒁹𒁹𒁹 𒁹𒁹𒁹)*-ն կարդացել է* ZAG(𒁹𒁹𒁹 𒁹𒁹𒁹), *որ նշանակում է* աջ *և այս սխալը հիմք է դարձել նաև* merib(?) *բառի* ձախ *ըմբռնմանը, ինչպես և «աջ ու ձախի» հետ կապված զանազան կրոնածիսակատարական սխալ եզրակացությունների),* targini, tsirabae, UD^{mi}, uaniše, ušuulmuuš(?) *և այլն:*

Երկրորդ խմբի բառերն են՝ ^{E}..ari, ^{I}Azani, adḳanaduni, barzani, guduli, guni, giei, kuurni, kapiištini *կամ* kapi ištini, kuulie *(տես* kuuldiani *բառը),* ḳiuraani, LUGAI-tuḫini, metsi(?), ^{NARU}Munani, pitsuše, šaue, taaše, tsišuli, ziildi *և այլն:*

Բացի դրանից Սրմավիրին առանձին երանգ են տալիս հատկապես այն բառերն ու դարձվածքները, որոնք այլ տեքստերում հանդես են գալիս միայն կրոնական բնույթի կապակցություններում: Այս տեսակետից արժեքավոր է mei eši metsi ilmuuše manuni *կապակցությունը:*

Ուրարտական արձանագրությունների թիվը, ինչպես հայտնի է, 200-ից բավական անցնում է, իսկ վերոհիշյալ դարձվածքը, որ հանդիպում է միայն Մհերյան դռան արձանագրության մեջ, մեր տեքստերում կիրառված է 3 անգամ, որից երկուսը՝ որոշակիորեն կրոնածիսակատարական կոնտեքստում (№ 7 արձանագրություն, № 11 արձանագրություն):

Չենք կարող չընդգծել մեզ մոտ № 8 արձանագրության մեջ նշված «մարդ» դետերմինատիվով բառերը՝ ^{LU}šeluini, ^{LU}purunuurdadi, ^{LU}urbikani *և ապա՝* 20 kuurni, 1 nunulie, 3 a..., 1 iḫaiduše, 2 ḫupadu *արտահայտությունները. անշուշտ իրավացի է ակադ. Դր. Ղափանցյանը, երբ այս համատեքստում է ուրարտական քրմական երարխիայի արտահայտություն, որ Մհերյան դռան արձանագրության մեջ անդամ չի հանդիպում:*

Սրմավիրյան տեքստերի կրոնական դրոշմը ընդգծվում է՝ bidi *(որ, մեր կարծիքով, նույնն է* bedi-ni, *հին* baddi-ni *բառի հետ, ինչպես երևում է այդ* bidi/bedi *բառերի կիրառման նույնությունից՝* ^{d}Ḫaldinani KÀ bidi-ni || ^{d}Ḫaldinani KÀ bedi-ni:

Դասկած կարող է հարուցել միայն Շուլգի № 6 արձանագրության 2-րդ տողում ba-di-ni գրությունը, որ ոչ մի կապ չունի bidi/bedi բառի հետ, եթե ba-di-ni (𒁀𒁺𒅀𒄿𒈬) չի ստացվել օգտագործելով di (𒅀𒄿) նշանի առաջին մասի (𒅀) կրկնությունից, այսինքն՝ 𒁀𒁺𒅀𒄿𒈬 (be-di-ni)-ն գարձած լինի 𒁀𒁺𒅀𒄿𒈬 ba-di-ni), tanuli, ŞUM, 'aali, guni, tananini, tsišuli, Խալդյան գոներ, Խալդուն գոհարևորող ոչխար, գառ, երինջ և այլ կրոնական բառերի ու գաղափարագրերի կիրառմամբ։

Ահա հողևոր կուլտուրայի կենտրոն լինելու այս նշանակությունը, ինչպես ճիշտ նշում է ակադ. Գր. Ղափանցյանը[1], Արմավիրը պահել էր և հետագա դարերում. այժմ ավելի դյուրին է այդ ապացուցել, երբ տակա են արմավիրյան հունական արձանագրությունները ակադեմիկոս Հ. Մանանդյանի խորը գիտական լուսաբանությամբ։

Ուշադրության արժանի է այն փաստը, որ 1911 թվին և 1927 թվին հայտնաբերված հունական այդ արձանագրությունները գտնվել են Արմավիր բլրի հարավում, Շահրիար տանող ճանապարհին, այսինքն հենց այնտեղ, ուր մոտավորապես գտնվել են և՝ մի շարք ուրարտական արձանագրություններ. հատկապես պետք է նշել Շահրիարի արձանագրությունը, որ հաղորդում է տաճարի կառուցման մասին և մեզ մոտ № 5 արձանագրությունը, որի տեքստը անհասկանալի կրոնածիսակատարական է։

Ըստ ակադ. Հ. Մանանդյանի՝ հունական առաջին արձանագրությունը, որի 3-րդ տեքստը նվիրաբերական բնույթի է, գտնվել է Մ. Խորենացու հիշատակած Ապոլլոնի և Արտեմիսի հունական տաճար-սրբավայրում։

Իրականության դեմ մեղանչած չենք լինի, եթե ասենք, որ հավանաբար, վերոհիշյալ հունական տաճարը կառուցվել է ուրարտական տաճարի տեղում։ Պատմությունը բավական փաստեր է տալիս այն մասին, որ հին սրբավայրերում կառուցվել են նոր, կրոնական երբեմն տարբեր բովանդակությամբ սրբավայրեր[2]։

---

[1] Ուրարտուի պատմություն, Երևան, 1940 թ., էջ 92։

[2] Տես Փ. Բուզանդ—Պատմութիւն հայոց, Պետերբուրգ, 1883, էջ 7։ «Բանդի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն

Ինչպես ճիշտ եզրահանգում է ակադ. Հ. Մանանդյանը, Արմավիրը Մովսես Խորենացու վկայությամբ՝ նախապես եղել է կրոնական սրբավայր, իսկ այդ վկայությունները ճշտվում, հաստատվում են հունական արձանագրություններով։

Ուրարտական Արգիշտիխինիլին (Արմավիրը) հետագա դարերում իր նշանակությունը պահպանել է նաև որպես վարչա-տնտեսական կենտրոն։

Բացի այն, որ հունական առաջին արձանագրության առաջին երկու տեքստը հաղորդում են ժառանգական զույգերի արդար բաժանման մասին, հայ պատմիչներն էլ Արմավիրը ներկայացնում են որպես բերդ։ Եղիշեն (մ.թ. 5-րդ դար) հիշատակում է Արմավիրի բերդը ի թիվս «Հայոց աշխարհի» այն տեղերի, որոնք զորքերի կայանն էին, արքունի ամառանոցները[1]։ Արմավիրի վարչա-քաղաքական դերը նշված է Մ. Խորենացու, Թ. Արծրունու և ուրիշների մոտ[2]։

Դժբախտաբար, ժամանակ առ ժամանակ պատմական փաստերը լռում են Արմավիրի մասին. այդ ժամանակներից է ուրարտական Սարդուր II-ի (8-րդ դար մ. թ. առաջ) Ռուսա III-ի (6-րդ դար մ. թ. առաջ) միջև ընկած տևողությունը։ Այս հանգամանքը իրավունք է տալիս որոշ գիտնականների եզրակացնելու, որ Սարդուր II-ից հետո (7-րդ դար մ. թ. առաջ) Արմավիրը կորցնում է իր նշանակությունը[3]։

Հենց պրոֆ. Բ. Պիոտրովսկու „История и культура Урарту“ աշխատության հիման վրա պետք է ասել, որ Ասորեստանի հզորացման հետևանքով ուրարտ տիրողները վերոհիշյալ շրջանում ապրել են ծանր օրեր։ Այդ ժամանակաշրջանում, ինչ-

Հայոց, հանդերձ թագաւորքն և մեծամեծքն, նախարարքն և, աշխարհախուժիս բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեան սրբեցան և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից տ՚մ ումեք» (Ընդգծումը մերն է.—Մ. Իսրայելյան)։ Կարելի է բերել և այլ փաստեր։

[1] Եղիշե, Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913 թ., էջ 100—101։

[2] Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913 թ., էջ 130—131։ Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917 թ., էջ 94, և այլն։

[3] *Б. Б. Пиотровский,*—История и культура Урарту, Ереван, 1944, էջ 157։

պես հայտնի է, տիրել են հաջորդաբար Ռուսա I-ը, Արգիշտի II-ը, Ռուսա II-ը և Սարդուր III-ը։ Վերջինս հայտնի է միայն ասսուրական Ասսուրբանիպալ թագավորի մի տեքստից, որը հաղորդում է թե ինչպես Սարդուրը հետևելով իր հայրերի օրինակին, նվերներով է հայտնում «իր տիրոջը» յուր հնազանդությունը։ Ուրիշ փաստեր նրա մասին չկան և զարմանալի չէ, որ Արմավիրն էլ նրան հիշատակող հուշարձան առայժմ չի տրվել։ Ծանր ժամանակներում է տիրել Ռուսա I-ը[1]։ Հնարավոր չէ պարզ պատկերացում տալ նաև Արգիշտի II-ի ժամանակաշրջանի մասին[2]. սրա շուրջը եղած փաստերը քիչ են և թույլ։ Թեև կարևոր, բայց թվով քիչ արձանագրություններ են թողել Ռուսա I-ը և Ռուսա II-ը։

Ուրարտուն այդ ժամանակաշրջանում ապրում է իր օրհասը, կյանքի ու մահու պայքար է մղում նա։ Ռուսա I-ը «Ի՞ր ձիով ու իր սեփական ձեռքերով է վերականգնում իր պետությունը և վերջում՝ պարտություն կրելով Սարգոնից, ինքնասպան է լինում (714 թ.)։

Նման պայմաններում, պարզ է, ժամանակ չպետք է լիներ լայնածավալ կառուցումների, նվաճումների և, մանավանդ, այդ բոլորը անմահացնող գրանցումների. անշուշտ, այս է պատճառը, որ այդ ժամանակից մեզ հասել են շատ քիչ թվով արձանագրություններ, որոնք գտնվել են ոչ թե ուրարտական արդեն ծանոթ վայրերում, այլ գլխավորապես նորանոր տեղերում։

Մյուս կողմից՝ զարմանալի չէ, որ Արմավիրը այդ ժամանակաշրջանը հիշատակող հուշարձան չի տվել, քանի որ նա լիակատար տեսքը ստացել էր արդեն Արգիշտու և Սարդուրի օրով և նոր շինարարական խոշոր աշխատանքների անհրաժեշտություն այնտեղ չպետք է լիներ։

Զարմանալի չէ նաև այն, որ մեզ հասած արմավիրյան տեքստերի ճնշող մասը պատկանում է Արգիշտի I-ին և Սարդուր II-ին. բնական է, որ Ուրարտուի ծաղկման և հզորացման շրջանի այդ տիրոջները թողել են ամենից ավելի շատ հուշարձաններ և, ուրեմն, շատից շատ պետք է հասներ մեզ։

Ռուսա III-ի միակ ֆրագմենտար արձանագրությունը (Արմավիրում) իր բնույթով մի պերճախոս փաստ է այն մասին, որ Ուրարտուն թեև ապրում էր իր վերջին օրերը (անշուշտ այդ զգալի էր նրա համար), այնուամենայնիվ, իր վեր-

[1] Նույն տեղ, էջ 95։
[2] Նույն տեղ, էջ 129։

ցալուցին էլ նրա վերջին շառավիղը նույնպես մառնել է իր անունը թողնել հետագա սերունդներին՝ եթե ոչ մեծ, ապա գոնե փոքր հուշարձանների միջոցով։

Սա փաստ է նաև այն մասին, որ Արմավիրը Արգիշտի I-ից սկսած մինչև Ուրարտական պետության անկումը պահպանել է իր վարչա-քաղաքական դերը, թեև խաղաց շինարարական, կուլտուր-կրոնական շեշտը ուժեղացել էր։

Սխալ է, ուրեմն, մեր կարծիքով, փաստերի բացակայության պատճառով Արմավիրի դերի նսեմացումը, մանավանդ որ Արմավիրը դեռ իր դանձերը չի բացել գիտության առջև. նա դեռ սպասում է իր հմուտ հնագետին, ո՞վ գիտե, թե ինչեր ունի պատմելու նա՝ իր հեռավոր անցյալից։

Այսպիսով՝ ուրարտական տեքստերի մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արգիշտի I-ը, տեր դառնալով Արմավիրին, դարձնում է այն վարչա-տնտեսական, ռազմա-քաղաքական խոշոր կենտրոն, իսկ նրա որդի Սարդուրը զբաղվում է բացառապես տաճարաշինությամբ և այդպիսով ուժեղացնում է Արմավիրի կուլտուր-կրոնական նշանակությունը առանց նսեմացնելու նրա վարչա-քաղաքական դերը։

Այնուհետև՝ մենք կարծում ենք, թե ժամանակ առ ժամանակ պատմական փաստերի բացակայությունը հիմք չի տալիս ենթադրելու, որ Արմավիրը մ. թ. ա. 7-րդ դարում կորցրել է իր նշանակությունը, այլ ընդհակառակն, ինչպես ցույց են տալիս մի կողմից նյութական կուլտուրայի նորանոր հուշարձանները, հատկապես եռանարեն տրձանագրությունները, մյուս կողմից՝ հայ պատմիչների կողմից տված տեղեկությունները, Արմավիրը իր այդ նշանակությունը պահպանել է 8-րդ դարից (մ. թ. ա.) մինչև մեր թվականության 5-րդ դարը, թեև, կրկնում ենք, Արմավիրի մասին պատմությունը մեջընդմեջ մնում է համր։

Մի բան սակայն պարզ է, որ Արմավիրը, ի հակադրություն Կարմիր-բլուրի, խաչավորել է մի շարք տարբեր ժամանակների, տարբեր կուլտուրաների, որոնք իրենց բարդ խճողվածությամբ կապվում են հայոց պատմության հետ։

Արմավիրի, ինչպես և հայոց պատմության այդ մութ էջերը կլուսաբանվեն անշուշտ, միայն հետագա՝ գիտական նոր հիմունքներով կազմակերպված պեղումների շնորհիվ։

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՏԻՊԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՎՅ 00347, պատվեր № 41, տիրաժ 100։

Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի տպարան, Երևան

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

FL0019792

A II
11029